ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

22 հունիսի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

90
(2756)

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ԵՐԵՎԱՆՈՒՄ ԲԻԶՆԵՍՆ Է ԾԱՂԿԱՑՆՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթը նախօրեին գրել էր, որ Արցախի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանի խորհրդական Արման Հակոբջանյանին այս օրերին հաջողվել է փախչել շրջափակված Արցախից. Հակոբջանյանն ինքը մեզ հետ զրույցում չէր էլ հերքել այս տեղեկությունը:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ վերջինս Երեւանում իր բիզնեսը ընդլայնելով է զբաղված:

Մեր հավաստի տեղեկություններով՝ Հակոբջանյանը գնել է Գագիկ Ծառուկյանին պատկանող գազալցակայանների ցանցը:

Ծառուկյանին են պատկանում «Մուլտի գազ» եւ «Մուլտի լեռն» ընկերությունների գազալցակայանները:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Իվետա Տոնոյանը հաստատեց, որ ԲՀԿ ղեկավարը վաճառել է իրեն պատկանող գազալցակայանները, բայց չգաղտնազերծեց, թե ում:

Մեզ հաջողվեց պարզել, որ գնորդը Արման Հակոբջանյանն է:

«Ժողովուրդ» օրաթերթը անկողմնակալությունը պահելու համար այս տեղեկությունը եւս փորձեց ճշտել Հակոբջանյանից:

Մեր հարցը լսելով՝ վերջինս կրկին վրդովվեց.

«Նախ՝ ես չեմ ցանկանում հեռախոսով մեկնաբանություն տալ, երկրորդ՝ եթե մի տեղ կա գնորդ եւ վաճառող, նախ վաճառողը պետք է առաջինը մեկնաբանի, նոր հետո գնորդը»,- արձագանքեց նա:

Երբ ասացինք, որ մյուս կողմը նույնպես մեկնաբանել է, Հակոբջանյանը շարունակեց խուսափել պատասխանից՝ ասելով, թե ծանոթներ չենք, ու ինքը չի ցանկանում մեկնաբանել, վաճառող կողմը թող մեկնաբանի:

Այսպիսով, Արցախում գումար աշխատելու շանսերը սպառված է համարում Հակոբջանյանը, փախել է Հայաստան՝ ընդլայնելու իր բիզնեսը: Դեռ կանդրադառնանք, թե ՔՊ-ական որ պատգամավորի եւ որ պաշտոնյայի տանիքի տակ է Արման Հակոբջանյանը զարկ տալիս իր բիզնեսին:

Հիշեցնենք, որ Արման Հակոբջանյանն այն գործարարն է, որ 2018-ից հետո Նիկոլ Փաշինյանի մերժման պայմաններում Սեւանա լճի ափին շքեղ առանձնատուն է կառուցել մի շարք օրինախախտումներով, սակայն Փաշինյանը աչք է փակում դրանց վրա:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ընդդիմադիր «Հայաստան» խմբակցությունը երկարատեւ քննարկումներից հետո որոշել է մասնակցել Երեւանի ավագանու առաջիկա ընտրություններին: Մեր աղբյուրներից տեղեկացանք, որ ընդդիմադիր խմբակցությունն այս օրերին ակտիվ քննարկումների մեջ է. որոշում են՝ ինչ ձեւաչափով մասնակցեն, ում թեկնածությունն առաջադրեն: Նրանք փորձում են գտնել մի թեկնածուի, ում շուրջ հնարավոր կլինի լայն կոնսոլիդացիա ապահովել եւ գնալ քաղաքական, այլ ոչ քաղաքային ընտրության: Փաստ է, որ այս պահին դեռ թեկնածու չեն գտել, փնտրտուքների մեջ են: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում «Հայաստան» խմբակցության քարտուղար Արծվիկ Մինասյանը հաստատեց մեր այս տեղեկությունը՝ հավելելով. «Թե ինչ ձեւաչափով ենք մասնակցելու, կամ թեկնածուն ով է լինելու, որոշում չկա. քննարկումները սրանց շուրջ դեռ շարունակվում են»:

ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանն ունի մեկ անհատական բնակելի տուն, մեկ բնակարան, մեկ հողամաս եւ երկու ավտոտնակ, ընդ որում՝ դրանք գտնվում են տարբեր վայրերում: «Ժողովուրդ» օրաթերթը փոխվարչապետի՝ 2022 թվականի հայտարարագրից տեղեկացավ, որ հողամասն ու առանձնատունը Աշտարակ քաղաքում են, իսկ մյուս գույքերը՝ Երեւանում՝ Կենտրոն վարչական շրջանում: Պարզվում է՝ Մհեր Գրիգորյանը բանկում ավանդներ ունի՝ 525 հազար դոլարի եւ 40 մլն դրամի չափով: Տարվա վերջում նա բանկային հաշիվներին ունեցել է 3 մլն դրամ, իսկ որպես կանխիկ դրամ հայտարարագրել է 70 մլն դրամ: Փոխվարչապետը մեկ տարում 1 մլրդ դրամից ավելի եկամուտ է ունեցել, որի մեջ 23մլն դրամը նրա աշխատավարձն է, իսկ մյուս գումարն էլ փոխառություններից է ստացված: Փոխվարչապետը մեկ տարվա ընթացքում նաեւ 56 մլն դրամի ծախս է ունեցել, սակայն բովանդակությունը բացահայտված չէ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը, ամենայն հավանականությամբ, Արարատյան հայրապետական թեմի առաջնորդ, արքեպիսկոպոս Նավասարդ (Սամվել) Կճոյանի գույքի հարցով դիմում կներկայացնի դատարան: Ավելին՝ մեր տեղեկություններով՝ դատախազությունում այս պահին Կճոյանի պարզաբանումներն են ստուգում, որոնք, կարծես թե, այդքան էլ համոզիչ չեն համարել: Մեր այս տեղեկությունը ՀՀ գլխավոր դատախազությունից չմեկնաբանեցին: Ինչպես հայտնի է, այս տարվա հունվարի 23-ին Արարատյան հայրապետական թեմի առաջնորդ, արքեպիսկոպոս Նավասարդ (Սամվել) Կճոյանը հրավիրվել էր Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն: Կճոյանին պատկանող գույքի առնչությամբ իրականացվում է ուսումնասիրություն, որի արդյունքում կազմվել է ամփոփագիր, ավելին՝ Նավասարդ Կճոյանի գույքն արգելանքի տակ է դրվել: Բանն այն է, որ իրավապահները հարց են բարձրացրել՝ որտեղից հոգեւորականը, որը չի ունեցել եկամուտ, ունի մեծ ծավալների գույք: Հոգեւորականը բացատրել է, որ դա նա՝ որպես հոգեւորական, ստացել է նվիրատվություն, իսկ, ահա, իրավապահները հոգեւորականին բացատրել են, որ եկեղեցին ասում է՝ այդ նվիրատվությունն իրենը չէ, եկեղեցունն է: Հիմա բանը հասել է այնտեղ, որ դատախազությունը սպասում է հոգեւորականի կողմից ներկայացվելիք փաստաթղթերին, որոնք կհիմնավորեն, որ Կճոյանի ունեցվածքն օրինական է: Նվիրատվությունն անձամբ իրե՞ն են արել, թե՞ եկեղեցուն. փաստ է, որ նա է տնօրինում գույքը:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՄԵՍՐՈՊ ԱՌԱՔԵԼՅԱՆԸ՝ «ՀԱՅԱՔՎԵ»-Ի ՄԱՍԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ վերջերս «Հայաքվե» օրենսդրական նախաձեռնությունը դրմել է «Ապրելու երկիր» կուսակցության նախագահ Մանե Թանդիլյանին, որպեսզի միանա նախաձեռնությանը, սակայն վերջինս մերժել է:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց «Ապրելու երկիր» կուսակցության համահիմնադիր, քաղաքական խորհրդի անդամ Մեսրոպ Առաքելյանի հետ՝ պարզելու եղելությունը:

-Պարոն Առաքելյան, մեր տեղեկությունների համաձայն՝ «Հայաքվե» օրենսդրական նախաձեռնությունը դիմել է «Ապրելու երկիր» կուսակցությանը, որպեսզի միանան նախաձեռնությանը, եւ մերժում է ստացել: Որքանո՞վ է տեղեկությունը համապատասխանում իրականությանը:

-Այո՛, մենք քննարկել ենք «Հայաքվե» նախաձեռնության հետ համագործակցության ձեւաչափերը եւ հայտնել մեր պատրաստակամությունը՝ հաշվի առնելով, որ ստորագրությունների հավաքման գործընթացը կազմակերպվելու է բացառապես համայնքապետարաններում եւ այն համայնքներում, որտեղ «Ապրելու երկիրը» իշխանություն է: Հայտնել ենք մեր պատրաստակամությունը, որ առնվազն այդ համայնքներում մենք պատրաստ ենք աջակցել այդ նախաձեռնությանը:

-Այսինքն՝ «Ապրելու երկիր» կուսակցությունը միանո՞ւմ է նախաձեռնությանը:

-Միանալ չէ, մենք պատրաստ ենք միանալ ոչ թե որպես կուսակցություն, այլ կուսակցության ռեսուրսներով հայտնել ենք պատրաստակամություն՝ աջակցելու, առավել եւս՝ մարզերում, որտեղ ունենք մեծ ռեսուրսներ: Մենք բոլոր մարզերում ունենք ներկայացվածություն, մի քանի համայնքներում ունենք իշխանություն, եւ հաշվի առնելով, որ «Հայաքվե»-ի կարեւորագույն հատվածը կայանում է նրանում, որ ստորագրությունները հնարավոր է կազմակերպել բացառապես համայնքապետարաններում, այն համայքներում, որտեղ մենք կառավարում ենք, այդտեղ աջակցությունը ավելի մեծ կլինի:

-Պարոն Առաքելյան, Դուք մտածում եք, որ «Հայաքվե» նախաձեռնության ստորագրահավաքին կարող են խոչընդոտե՞լ համայնքապետարաններում:

-Ես նկատի ունեմ, որ մարդիկ պետք է գնան համայնքապետարան, եւ չեմ բացառում, որ գործող իշխանության կողմից կառավարվող համայնքապետարաններում այս պրոցեսը տեղի չունենա, կամ փորձեն խոչընդոտել: Քաղաքացիները ստորագրելու ցանկություն ունենալու պարագայում պետք է մտնեն համայնքապետարան, ու չնայած համայնքապետարաններում օրենքով պարտավոր են այդ պրոցեսը իրականացնել, բայց չեմ բացառում, որ այնտեղ, որտեղ «Քաղաքացիական պայմանագիր»-ն է իշխանության, խոչընդոտեն գործընթացին:

-Պարոն Առաքելյան, նաեւ կարծիք է հնչում, որ դուք չեք միացել նախաձեռնությանը, քանի որ առջեւում քաղաքապետի ընտրություններ են, եւ չեք ուզում այլ նախաձեռնություններով հանդես գալ. սա որեւէ կերպ առնչություն ունի՞:

-«Հայաքվե» նախաձեռնության հեղինակները այն անձինք են, որոնք որոշել են իրենց նախաձեռնությունը իրականացնել, հետեւաբար մենք աջակցում ենք այն բոլոր նախաձեռնություններին, որոնք ինչ-որ ձեւով ուղղված են Արցախում ստեղծված իրավիճակի կարգավորմանը: Ինչ վերաբերում է կուսակցությանը, այո՛, այս պահին մեր գլխավոր խնդիրը Երեւանի ընտրություններն են: Ամենայն հարգանքով բոլոր նախաձեռնություններին, բայց ստեղծված իրավիճակից դուրս գալու միակ ճանապարհը իշխանափոխությունն է: Մնացած բոլոր նախաձեռնությունները, ցավոք, առկա մարտահրավերներին չեն կարող տալ այն լուծումը, որի անհրաժեշտությունը ունենք: Հետեւաբար, այո՛, մեր կուսակցության բոլոր ռեսուրսները ուղղված են լինելու Երեւանի ընտրություններում հաղթելուն եւ իշխանափոխություն իրականացնելուն ոչ միայն Երեւանում:

Զրուցեց ՄԱՇԱ ՄԵԼՔՈՆՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ՔՊ-ԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԸ՝ ԸՆԿԵՐՈՋ ՄԵՔԵՆԱՅՈՎ

«Ժողովուրդ» օրաթերթը հայտնել էր, որ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Կարեն Սարուխանյանը վթարի է ենթարկվել՝ իրեն պատկանող ավտոմեքենայով բախվելով բեռնատարի: Վթարը տեղի է ունեցել Գյումրու նախկին «Շիրակ» հյուրանոցի մոտակայքում:

«Ժողովուրդ» օրաթերթը ֆիքսեց, որ Սարուխանյանի մեքենայի վրա վրացական պետհամարանիշներ են: Բոլորի համար տարօրինակ էր այն փաստը, թե ինչու է պատգամավորը երթեւեկում վրացական պետհամարանիշներով:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց Կարեն Սարուխանյանի հետ՝ պարզելու համար, թե ինչպես է ստացում, որ վերջինս այդ համարանիշներով է երթեւեկում: Մեզ հետ զրույցում պատգամավորը հայտարարեց, թե մեքենան, որն այդ օրը վարել է, եղել է իր ընկերոջ մեքենան: Ավելին՝ Սարուխանյանն ասաց՝ թե՛ Գյումրիում եւ՛ թե այլ վայրերում իրեն կարելի է տեսնել եւ՛ վրացական, եւ՛ ռուսական, եւ՛ հայկական համարանիշներով, ու դրանք բոլորը պատկանում են իր ընկերներին:

Սարուխանյանը նաեւ նշեց, որ ինքը ավտոմեքենա չունի, եւ իր հայտարարագրում որեւէ մեքենա նշված չէ, ինքը երթեւեկում է բացառապես իր ընկերների մեքենաներով: Նաեւ հավելեց, որ այդ վթարի մեղավորը ինքը չի եղել, եւ պատկան մարմինները կբացահայտեն իրականությունը:

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ՝ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ

ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի գրասենյակից հայտարարություն են տարածել, որում ասվում է. «Հայրենավաճառության մեջ մեղադրվողի հուսահատ ջանքերը ոչ մի քննության չեն դիմանում». ՀՀ 3-րդ նախագահի գրասենյակ»:

Մեկնաբանություն ստանալու՝ լրատվամիջոցների խնդրանքներին ընդառաջելով՝ ՀՀ երրորդ նախագահի գրասենյակն արձագանքում է վարչապետի աթոռը զբաղեցնողի երեկվա ցնորամտություններին, որոնք հնչել են «2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հանգամանքների ուսումնասիրման նպատակով ստեղծված ԱԺ քննիչ հանձնաժողովի դռնբաց նիստ» կոչվող շոուի ժամանակ:

«ՀՀ վարչապետի աթոռը զբաղեցնող կապիտուլյանտի երեկվա ընթերցանությունը ՀՀ ԱԺ քննիչ հանձնաժողովում ավելի շուտ հիշեցնում էր սեփական պետությանն ու ժողովրդին դավաճանելու մեջ մեղադրվողի պաշտպանական ճառի փորձարկում:

Հայրենավաճառության մեջ մեղադրվողի հուսահատ ջանքերը ոչ մի քննության չեն դիմանում: Արդարացում չունեցող՝ իր պետականակործան քաղաքականությունն արդարացնելու նպատակով ակնհայտ փաստերի միտումնավոր խեղաթյուրումն ավելի է ծանրացնում հանցանքը»:

ՄԻԼԻՈՆՆԵՐ՝ ՓԻԱՌԻ ՀԱՄԱՐ

ՀՀ կառավարությունը մտադիր է 64 մլն 166 հազար դրամ հատկացնել՝ «ՀՀ վերաբերյալ պաշտոնական տեղեկատվության ապահովում, նաեւ՝ միջազգային հարթակներում» միջոցառման համար: Այս որոշմամբ, ըստ էության, իշխանությունները նպատակ ունեն ավելի լավ իրականացնել իրենց փիառը միջազգային ասպարեզում, այն էլ՝ մի քանի լեզուներով: Բանն այն է, որ այս գումարը տրամադրվելու է, որպեսզի «Արմենպրես» լրատվական գործակալությունը նորություններ հրապարակի նաեւ չինարեն, պարսկերեն եւ վրացերեն: Ավելին՝ նպատակների իրականացման համար փոփոխվել է «Արմենպրես»-ի հաստիքացուցակը. ավելացվել են 16 նոր հաստիքներ: Համաձայն նոր հաստիքացուցակի՝ 16 աշխատակիցների վարձատրության համար անհրաժեշտ է 45.576,3 դրամ: Ստացվում է՝ իշխանությունը ձգտում է պետական լրատվամիջոցը զարգացնել, որպեսզի ապահովվի իրենց գովազդը, քանի որ Հանրային հեռուստաընկերությունն էլ վաղուց վերածվել է իշխանության քարոզչամեքենայի:

ԵՄ ԴԻՏՈՐԴՆԵՐԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանում ԵՄ դիտորդական պատվիրակությունը իր թվիթերյան միկրոբլոգում գրել է. «Հայաստանում ԵՄ առաքելության ղեկավար Մարկուս Ռիտերը եւ Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Անդրեա Վիկտորինը ողջունում են ԵԽ պաշտպանության հանձնաժողովի նախագահ Նատալի Լուազոյին եւ SEDE-ի պատվիրակությանը, որոնք Սիսիանի օդանավակայանում կմիանան ԵՄ մոնիտորինգային թիմին՝ Լաչինի միջանցքում ծրագրվող պարեկության համար»:

ԳՈՐԾՈՒՂՎԵՑԻՆ ՌԴ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի գլխավորած պատվիրակությունը հունիսի 22-24-ը կգործուղվի Ռուսաստանի Դաշնություն:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ պատվիրակությունը Մոսկվայում կմասնակցի Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի եւ Անկախ պետությունների համագործակցության տնտեսական խորհրդի նիստերին:

ՌԴ մեկնող պատվիրակության կազմում լինելու են ՌԴ-ում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Վաղարշակ Հարությունյանը եւ Բելառուսում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան, ԱՊՀ կանոնադրական եւ այլ մարմիններում Հայաստանի Հանրապետության մշտական լիազոր ներկայացուցիչ Ռազմիկ Խումարյանը, ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Նարեկ Տերյանը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Աշոտ Մուրադյանը, ՀՀ արտաքին գործերի նախարարության եվրասիական տարածաշրջանի վարչության ՀԱՊԿ բաժնի պետ Ժիրայր Անանյանը:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՎԱՐԺԱՆՔՆԵՐԸ ԿՍԿՍՎԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ նախատեսվում է 2023թ. օգոստոսի 1-ից մինչեւ հոկտեմբեր 13-ը անցկացնել պահեստազորայինների վարժական հավաքներ:

Դրա հետ կապված՝ նաեւ որոշում է կայացվել ռազմատրանսպորտային պարտականություններ ունեցող մարմիններից ներգրավել տրանսպորտային միջոցներ, սահմանել վարժական հավաքների անցկացման նպատակները, ներգրավվող պահեստազորայինների կազմերը, քանակները, ներգրավման ժամկետները, ներգրավվող տրանսպորտային միջոցների տեսակները, քանակները եւ ներգրավման ժամկետները:

Տեղեկացանք, որ հայտարարվող վարժական հավաքների ծախսերն իրականացվելու են՝ՀՀ 2023 թվականի պետական բյուջեով այդ նպատակով հատկացված միջոցների հաշվին:

ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ

ԱՐՑԱԽԻ ԱԳՆ-Ն՝ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՎԱՐՔԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Արցախի ԱԳՆ-ն հայտարարություն է տարածել Ադրբեջանի կողմից միջազգային պարտավորությունների խախտմամբ Լաչինի միջանցքի ամբողջական արգելափակման կապակցությամբ, որում նշված է.

«Հունիսի 15-ից ի վեր՝արդեն 7-րդ օրն է, ինչ Ադրբեջանը ամբողջությամբ արգելափակել է ՌԴ խաղաղապահ զորակազմի եւ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) կողմից Լաչինի միջանցքով իրականացվող բոլոր տեսակի հումանիտար բեռների՝ներառյալ պարենի եւ դեղորայքի մատակարարումներն Արցախ՝ դրանով իսկ միտումնավոր զրկելով Արցախի 120 հազար բնակչությանը, այդ թվում՝ երեխաներին, կանանց եւ ծերերին, գոյատեւման նվազագույն միջոցներից:

Ընդգծում ենք, որ Լաչինի միջանցքի ամբողջական եւ կամայական արգելափակումը, մասնավորապես՝ՌԴ խաղաղապահ զորակազմի եւ ԿԽՄԿ-ի կողմից Արցախի պաշարված ժողովրդի հիմնական կարիքների համար նախատեսված մարդասիրական բեռների փոխադրմանը միտումնավոր խոչընդոտելը, միջազգային իրավունքում դիտարկվում է որպես պատերազմական հանցագործություն: Ըստ էության, Ադրբեջանը 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության դրույթների աղաղակող խախտումներից եւ ՄԱԿ-ի միջազգային դատարանի՝2023 թ. փետրվարի 22-ի իրավաբանորեն պարտավորեցնող վճռի լիակատար անտեսումից անցել է պատերազմական հանցագործություն հանդիսացող գործողությունների:

Հիշեցնենք, որ Լաչինի միջանցքը, որը նախատեսված է Ռուսաստանի, Ադրբեջանի եւ Հայաստանի ղեկավարների՝2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ, որով, մասնավորապես, սահմանվում է ՌԴ խաղաղապահ զորակազմի կողմից միջանցքի բացառիկ վերահսկողությունը, անցած վեց ամիսների

ընթացքում գործել է Ադրբեջանի կողմից խիստ եւ կամայական սահմանափակումներով եւ օգտագործվել միայն ԿԽՄԿ-ի եւ ՌԴ խաղաղապահ զորակազմի ավտոմեքենաների անցման համար: Հունիսի 15-ին՝ Հակարիի կամրջի վրա ադրբեջանական դրոշի հետ կապված կանխամտածված սադրանքից հետո, Ադրբեջանն ամբողջությամբ արգելափակել է միջանցքը, այդ թվում՝ զրահամեքենաների օգտագործմամբ: Այսպիսով, միջանցքով երկու ուղղություններով երթեւեկությունն արդեն փակ է նաեւ ԿԽՄԿ-ի եւ ՌԴ խաղաղապահ զորակազմի ներկայացուցիչների համար, որոնք առաջին անհրաժեշտության ապրանքներ էին մատարակարում Արցախի Հանրապետություն:

Արցախի լիակատար շրջափակումը եւ արտաքին աշխարհից մեկուսացումը խորացնում են հումանիտար ճգնաժամը եւ պարարտ հող նախապատրաստում, որպեսզի մարդկության դեմ ուղղված Ադրբեջանի շարունակական հանցագործությունները վերաճեն ցեղասպանության հանցագործության: Ամբողջովին արգելափակելով Լաչինի միջանցքը, որն արցախցիների կյանքի միակ ճանապարհն է՝Ադրբեջանը փաստացի նոր մակարդակի է հասցրել Արցախի էթնիկ զտման եւ, որպես այդպիսին, նրա ժողովրդի ոչնչացման իր նպատակաուղղված քաղաքականությունը:

Կասկածից վեր է, որ Լաչինի միջանցքի նկատմամբ ապօրինի վերահսկողություն սահմանելու սկզբնական նպատակը եղել է դրա հետագա արգելափակումը եւ շրջափակման օգտագործումը որպես Արցախի ժողովրդի դեմ ագրեսիվ եւ ցեղասպան քաղաքականություն վարելու միջոց: Ըստ էության, Լաչինի միջանցքը, որն ի սկզբանե նախատեսված էր արտաքին աշխարհի հետ Արցախի կապն ապահովելու համար եւ հանդիսանում էր նրա ժողովրդի բնականոն կենսագործունեության երաշխիքներից մեկը, Ադրբեջանի կողմից օգտագործվում է որպես ռազմաքաղաքական գործիք Արցախի Հանրապետության եւ նրա քաղաքացիների դեմ ագրեսիվ գործողություններ իրականացնելու համար:

Խստորեն պահանջում ենք, որ միջազգային հանրության բոլոր պատասխանատու անդամները ձեռնարկեն անհրաժեշտ հավաքական եւ անհատական միջոցներ՝ դադարեցնելու Ադրբեջանի կողմից իրականացվող շարունակական միջազգային հանցագործությունները, ինչպես նաեւ կանխելու Արցախի ժողովրդին սպառնացող ցեղասպանության աղետը: Ժամանակն է նաեւ, որպեսզի ԿԽՄԿ-ն եւ այլ համապատասխան միջազգային կառույցները եւ իրավապաշտպան կազմակերպությունները պատշաճ եւ համարժեք գնահատեն ստեղծված իրավիճակը եւ հորդորեն Ադրբեջանի իշխանություններին հարգել Արցախի ժողովրդի մարդասիրական օգնության եւ միջազգային պաշտպանության իրավունքը: Ընդգծում ենք, որ անգործությունը եւ անտարբերությունը փաստացի խրախուսում են Ադրբեջանի ցեղասպան գործողությունները»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱԳ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼՆ ԸՆԴՈՒՆԵՑ

ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Վահան Կոստանյանն ընդունել է Եվրոպական խորհրդարանի անվտանգության եւ պաշտպանության հարցերով ենթակոմիտեի պատվիրակությանը՝նախագահ Նատալի Լուազոյի գլխավորությամբ:

ՀՀ ԱԳՆ-ից հայտնում են, որ ողջունելով պատվիրակության անդամներին՝ Վահան Կոստանյանը բարձր է գնահատել Հայաստանի համար առաջնային կարեւորության հարցերում Եվրոպական խորհրդարանի սկզբունքային դիրքորոշումը՝ շնորհակալություն հայտնելով պատվիրակության անդամներին իրենց հայանպաստ գործունեության համար:

Կողմերը քննարկել են Հայաստանի եւ Եվրոպական միության միջեւ համագործակցության օրակարգին առնչվող հարցերի լայն շրջանակ: Հայկական կողմը մեծապես կարեւորել է Հայաստանում ԵՄ առաքելության տեղակայումը եւ տարածաշրջանում անվտանգային իրավիճակի կայունացմանն ուղղված ԵՄ ջանքերը: Քննարկված հարցերի համատեքստում ԱԳ նախարարի տեղակալը համապարփակ ներկայացրել է Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորման գործընթացի եւ ԼՂ ժողովրդի իրավունքների եւ անվտանգության երաշխիքների հասցեագրման շուրջ վերջին զարգացումները, ինչպես նաեւ, զրուցակիցների խնդրանքով, անդրադարձել է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանն ուղղված քայլերին:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՀԵՏԱԳԱ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՀԱՄԱՐ

Հայ-թուրքմենական տնտեսական համագործակցության հետագա ընդլայնման հնարավորություններն են քննարկվել ՀՀ-ում Թուրքմենստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Մուհամետելդի Այազովի ու Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միության փոխնախագահ Ներսես Կարամանուկյանի՝ ՀԱԳՄ-ում կայացած հանդիպման ժամանակ:

«Երկկողմ տնտեսական կապերն ունեն լավ ավանդույթներ, վերջին տարիներին արձանագրվել է փոխադարձ ապրանքաշրջանառության զգալի աճ»,- նշեց Միության փոխնախագահը: Նրա խոսքով՝հայ գործարարները լավ հեռանկարներ են տեսնում առեւտրատնտեսական փոխգործակցության խորացման համար, առկա է դեռեւս չիրացված մեծ ներուժ ամենատարբեր՝ էներգետիկ, գյուղատնտեսության, թեթեւ արդյունաբերության, դեղագործական, ոսկերչության, շատ այլ ոլորտներում: Ներսես Կարամանուկյանը դեսպանին ներկայացրեց ՀԱԳՄ գործունեությունը, իրականացվող ծրագրերը:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ Մուհամետելդի Այազովը նշեց, որ տնտեսական համագործակցությունը Հայատան-Թուրքմենստան հարաբերությունների կարեւորագույն ուղղություններից է: ՀՀ-ում 4,5 տարվա իր դիվանագիտական գործունեության ընթացքում հաջողվել է իրագործել երկկողմ հիշարժան նախաձեռնություններ, սակայն կան դեռ բազմաթիվ չիրականացված հնարավորություններ: Նրա խոսքով՝ առեւտրատնտեսական կապերի հետագա զարգացմանը կարող է նպաստել նաեւ այն լոգիստիկ ծրագրերի իրականացումը, որոնք ներկայում քննարկման փուլում են: Արտակարգ եւ լիազոր դեսպանը կարեւորեց երկու երկրների Արդյունաբերողների եւ գործարարների միությունների սերտ համագործակցությունը՝ որպես տնտեսական կապերի աշխուժացման կարեւոր գործոն:

Մուհամետելդի Այազովը փոխանցեց Թուրքմենստանի նախարարների կաբինետի նախագահի տեղակալ Բաթիր Ատդաեւի նամակը, որով նա ՀԱԳՄ նախագահ Արսեն Ղազարյանին հրավիրում է մասնակցելու նորակառույց Արկադաղ քաղաքի՝ հունիսի 29-ին կայանալիք պաշտոնական բացմանը եւ այդ առիթով կազմակերպվելիք միջոցառումներին:

ՎԱՐՈՒՅԹ

ՎԵՐԱՎԱՃԱՌՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ՝ ՊՆ-Ի ԿՈՂՄԻՑ

Պաշտպանության նախարարությունը «Կրեդիտ-Երեւան բանկ» ՍՊ ընկերությունից, պետության հանդեպ ունեցած 500 հազար ԱՄՆ դոլար պարտքի դիմաց, 2004 թվականին ստացել է ընկերությանը պատկանող 441,01 քմ մակերեսով շինությունը եւ նույն գույքը մեկ ամիս անց 90 հազար ԱՄՆ դոլարով՝ 410 հազար ԱՄՆ դոլարով պակաս, վաճառել «Անելիք բանկ» ՍՊԸ-ին. հայտնում են դատախազությունից:

Երեւան քաղաքի Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների դատախազությունում, պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու գործառույթի շրջանակում, ուսումնասիրվել է Նոր Նորք վարչական շրջանի «Տիգրան Մեծի անվան զբոսայգու» տարածքի Մոլդովական 27ա հասցեում գտնվող գույքի եւ տարածքի օտարման գործը:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2004 թվականի մայիսի 17-ին «Կրեդիտ-Երեւան բանկ» ՍՊԸ-ին տրվել է Մոլդովական 27ա հասցեում գտնվող՝ 441,01 քմ մակերեսով շինության սեփականության եւ 525 քմ մակերեսով հողամասի վարձակալության վերաբերյալ իրավունքի վկայականը (հողամասը, Երեւանի քաղաքապետի 2004 ապրիլի 27-ի թիվ 697-Ա որոշմամբ, ընդգրկված է եղել օտարման ոչ ենթակա հողերի ցանկում):

2004 թվականի հունիսի 1-ին «Կրեդիտ Երեւան բանկ» ՍՊԸ լուծարվող բանկի եւ Պաշտպանության նախարարության միջեւ՝ի դեմս նախարար Ս.Ս.-ի կողմից լիազորված անձ Վ.Ա.-ի, կնքվել է պայմանագիր, ըստ որի՝ բանկը, Պաշտպանության նախարարության հանդեպ իր ունեցած 500 հազար ԱՄՆ դոլար պարտավորությունների դիմաց, ՊՆ-ին է հանձնել Մոլդովական 27ա հասցեում գտնվող՝ 441,01 քմ մակերեսով շինությունն ու 525 քմ մակերեսով հողամասը:

Պայմանագրով նախարարությունը պարտավորվել է գույքի վաճառքից գոյացած գումարը՝ 500 հազար ԱՄՆ դոլարը գերազանցելու դեպքում ավել գումարը վերադարձնել «Կրեդիտ Երեւան բանկ» ՍՊ ընկերությանը:

Ընդամենը մեկ ամիս 12 օր անց՝ 2004 թվականի հուլիսի 13-ին, նախարարությունը՝ ի դեմս նախարար Ս.Ս.-ի, նույն գույքը 90 հազար ԱՄՆ դոլարով՝ 410 հազար ԱՄՆ դոլարով պակաս, վաճառել է «Անելիք բանկ» ՍՊԸ-ին:

Բացի այդ, կառավարության՝ 2005 թվականի դեկտեմբերի 12-ի որոշմամբ հաստատված Երեւան քաղաքի գլխավոր հատակագծի ուսումնասիրությամբ պարզվել է, որ նշված տարածքը դեռեւս չպարզված հանգամանքներում առանձնացվել է այգու սահմաններից՝ դասակարգվելով որպես հասարակական կառուցապատման հողամաս: Մասնավորապես՝ 2006 թվականին Երեւանի գլխավոր ճարտարապետն «Անելիք բանկ» ՍՊԸ-ին հայտնել է, որ հողամասը ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդված սահմանափակումների ցանկում չէ եւ կարող է օտարվել, ինչի հիման վրա՝ հողամասն ուղղակի վաճառքով 2 մլն 375 հազար 100 դրամով օտարվել է վերը նշված բանկին: 2007 թվականին, Երեւանի քաղաքապետի որոշմամբ, բանկին վաճառվել է նաեւ հողամասին հարակից 274, 85 քմ մակերեսով հողամասը, ինչպես նաեւ տրամադրվել է 239 քմ մակերեսով հողամաս՝ առանց քաղաքաշինական գործունեություն իրականացնելու թույլտվության:

2018 թվականին «Անելիք բանկ» ՍՊԸ-ն անշարժ գույքը 135 մլն 556 հազար 400 դրամով վաճառել է քաղաքացիներ Ա.Վ.-ին եւ Ար.Վ.-ին:

Երեւան քաղաքի Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների դատախազությունը 2023 թվականի հունիսի 12-ին հաղորդում է ներկայացրել Հակակոռուպցիոն կոմիտե:

2023 թվականի հունիսի 13-ին Հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով (Պաշտոնեական լիազորությունները չարաշահելը):

ԿԱՇԽՈՒՔ

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԵԼ Է

Թալինի համայնքապետարանի աշխատակցի հաղորդման հիման վրա ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում նախաձեռնված քրեական վարույթով հիմնավորվել է, որ «Ա. Պեռլիտ» ՍՊԸ տնօրենը իր օգտին աղօրինի գործողություն կատարելու համար պաշտոնատար անձին տվել է խոշոր չափերով՝ 1.900.000 ՀՀ դրամ կաշառք:

ՔԿ-ից հայտնում են, որ նախաքննությամբ պարզվել է՝ «Ա.Պեռլիտ» ՍՊԸ տնօրեն Է. Ա.-ն դիմել է Թալինի համայնքապետարան Մաստարայի պեռլիտի հանքավայրի շահագործման համար նոր հողատարածք վարձակալելու նպատակով: Համայնքապետարանը, սակայն, հաշվի առնելով, որ ընկերության կողմից արդյունահանվելիք հանքանյութը վերամշակվելու է համայնքի հանդեպ ստանձնած ֆինանսական պարտավորությունները ժամանակին եւ ոչ բարեխիղճ կատարող, առանց հողի նպատակային նշանակության փոփոխության հանքարդյունաբերությամբ զբաղվող «Արագած Պեռլիտ» ՍՊ ընկերությանը պատկանող հանքանյութի վերամշակման գործարանում, որի աշխատանքի արդյունքում առաջացող փոշին վնասում է հարակից տարածքում գտնվող բերքը եւ բնակիչների մեծամասնության դժգոհության պատճառ հանդիսանում, դեմ է արտահայտվել հողատարածքը «Ա.Պեռլիտ» ՍՊ ընկերությանը վարձակալությամբ տրամադրելուն, ինչի հիման վրա՝ նշված ՍՊԸ-ի լիցենզավորումը մերժվել է:

Այնուհետեւ «Ա.Պեռլիտ» ՍՊԸ տնօրեն Է. Ա.-ն դիմել է Թալինի համայնքապետարանի աշխատակից Ս. Թ.-ին եւ վերջինիս խնդրել միջնորդել Թալին համայնքի ղեկավար Տ. Ս.-ին կաշառքի դիմաց պեռլիտի հանքի շահագործման համար նոր լիցենզիա ստանալու հարցում, մասնավորապես՝ արդյունահանման աշխատանքներ կատարելու նպատակով Տ. Ս.-ի միջամտությամբ հանրային կրկնակի լսումներ կազմակերպել ու Թալինի համայնքապետարանի դիրքորոշման մասին նոր՝ դրական եզրակացություն ուղարկել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձարկման կենտրոն» ՊՈԱԿ:

Դրանից հետո Ս. Թ.-ն հաղորդում է ներկայացրել ՀՀ ազգային անվտանգության ծառայություն՝ «Ա.Պեռլիտ» ՍՊ ընկերության տնօրենի կողմից կաշառք տալու վերաբերյալ, որի հիման վրա՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված վարույթով իրականացվել են գաղտնի քննչական գործողություններ, այդ թվում՝ «Կաշառք ստանալու նմանակում», որի շրջանակում Է. Ա.-ն Ս. Թ.-ի միջոցով 2023 թվականի ապրիլի 27-ին Տ. Ս.-ին տվել է խոշոր չափերով՝ 1.900.000 ՀՀ դրամ կաշառք:

Կաշառք տալուց անմիջապես հետո Է. Ա.-ն ձերբակալվել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական վարչության աշխատակիցների կողմից:

Է. Ա.-ին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ եւ 3-րդ կետերով: Նա իրեն լիովին մեղավոր է ճանաչել ներկայացված մեղադրանքում եւ տվել խոստովանական ցուցմունքներ:

Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է: Վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, հանձնվել են հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ դատարան ուղարկելու միջնորդությամբ:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԿԱԼԱՆԱՎՈՐԸ ԻՆՔՆԱՍՊԱՆ Է ԵՂԵԼ

Քիչ առաջ «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ «Արմավիր» ՔԿՀ-ում կալանավորին գտել են կախված վիճակում: Մենք տեղեկացանք, որ նա մեղադրվում էր հոր սպանության համար:

Մեր այս տեղեկությանն ի պատասխան՝ Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության լրատվական ծառայությունից հայտնեցին. «2023 թվականի հունիսի 21-ին՝ ժամը 07:00-ի սահմաններում, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում հայտնաբերվել է մենախցում տեւական ժամանակ մեկուսի պահվող կալանավորված անձ, 1979թ. ծնված, ՀՀ քր. օր.-ի 166հ. 2մ. 1կ. մեղադրվող Վ.Ղ.-ի դին՝ խցի պատուհանի ճաղավանդակից սավանով կախված վիճակում: Դեպքի առթիվ ՀՀ ՔԿ Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնում նախապատրաստվում են նյութեր»:

Ք. Մ.

ՁԵՌՔԵՐՆ ՈՒ ՈՏՔԵՐԸ ԿԱՊԵԼ ԷԻՆ

Հունիսի 19-ին՝ ժամը 21.50-ին, ոստիկանության Կոտայքի բաժին հաղորդում տված քաղաքացին հայտնել էր, որ քույրը՝ 1981 թ. ծնված Նվարդ Նալչաջյանը, հունիսի 18-ի ժամը 19-ին դուրս է եկել Պտղնի գյուղի Ամառանոցային թաղամասի 2-րդ փողոցի իր տնից եւ չի վերադարձել:

Աբովյանի քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ:

ՆԳՆ քրեական ոստիկանության, Կոտայքի եւ Արմավիրի մարզային վարչությունների, Կոտայքի, Հրազդանի, Նաիրիի եւ Վաղարշապատի բաժինների ծառայողների համատեղ ձեռնարկած միջոցառումների արդյունքում պարզվել է, որ Նվարդ Նալչաջյանին սպանել է Արմավիրի մարզի Փարաքար գյուղի 18-ամյա մի բնակիչ: Հունիսի 20-ի ժամը 21.20-ին Արմավիրի մարզի Մերձավան գյուղի Երեւանյան խճուղու շենքերից մեկում նա հայտնաբերվել, ձերբակալվել եւ, Նվարդ Նալչաջյանի «Միցուբիշի» մակնիշի մեքենայով հանդերձ, տեղափոխվել է ոստիկանության Կոտայքի բաժին, որտեղ խոստովանել է, որ նշված հանցանքը կատարել է ինքը:

Փարաքար գյուղի բնակիչ, 18-ամյա երիտասարդը եւ կազմված փաստաթղթերը ներկայացվել են Աբովյանի քննչական բաժին, որտեղ նա ցուցմունք է տվել՝ հայտնելով դիակի գտնվելու վայրը: Փարաքար գյուղի չշահագործվող քարի արտադրամասի հարակից ձորակում հայտնաբերվել է դիակը՝ ձեռքերը, ոտքերն ու բերանը կպչուն ժապավենով կապկպված:

Քրեական վարույթը շարունակվում է:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունիսի 20-ից 21-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 62 դեպք, որոնցից 5-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԴԱՏԱԿԱՆ ԿՐՔԵՐ՝ ԴԻԼԻՋԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿՈՒՄ

«Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի «Դիլիջան տեղամաս» մասնաճյուղի պետ Արտակ Հարությունյանը դիմել է Տավուշի մարզի առաջին ատյանի դատարան՝«Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ռոբերտ Ալիխանյանի՝ 2023թ. մայիսի 12-ի թիվ 107-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջով. այդ հայցն ընդունվել է դատավոր Նանա Կոստանդյանի վարույթ: Մինչ այդ Արտակ Հարությունյանը Տավուշի մարզի առաջին ատյանի դատարան է դիմել՝ Ռոբերտ Ալիխանյանի՝ 2023թ. մարտի 24-ի թիվ 67-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջով: 2023թ. մայիսի 18-ին դատարան է հանձնվել այդ հայցադիմումի պատասխանը: «Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց Դիլիջան ազգային պարկի տնօրենի ԺՊ Ռոբերտ Ալիխանյանի հետ, որպեսզի ճշտի, թե իր՝ 2023թ. մարտի 24-ի թիվ 67-Ա հրամանն ու 2023թ. մայիսի 12-ի թիվ 107-Ա հրամանն ինչ բովանդակություն ունեն: Նա ասաց, որ այդ հրամանները նույն բովանդակությունն ունեն, ինքը դրանցով Արտակ Հարությունյանին նկատողություն է հայտարարել բնակչությանը թափուկ վառելափայտ մատակարարելու հետ կապված աշխատանքներում թերանալու համար: Հավելենք, որ Արտակ Հարությունյանը «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի ԺՊ-ի հրամանը դատական կարգով վիճարկելու հաջող փորձ ունի: «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արա Խլոյանի՝ 2021 թվականի հունիսի 25-ի հրամանով՝ Արտակ Հարությունյանի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ. նա ազատվել է ազգային պարկի «Դիլիջան տեղամաս» մասնաճյուղի պետի պաշտոնից: Վերջինս դիմել է դատարան: 2022 թվականի ապրիլի 27-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի նախագահ Սարգիս Արմենակյանը վճռել է Ա. Հարությունյանի հայցը բավարարել, անվավեր ճանաչել Ա. Խլոյանի՝2021 թվականի հունիսի 25-ի թիվ 258-Ա հրամանը՝ «Դիլիջան տեղամաս» մասնաճյուղի պետ Ա. Հարությունյանի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու եւ նրան աշխատանքից ազատելու մասին, Ա. Հարությունյանին վերականգնել իր նախկին աշխատանքում, «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ից հօգուտ Ա. Հարությունյանի բռնագանձել միջին աշխատավարձը՝հաշվարկը կատարելով հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար՝2021թ. հունիսի 25-ից մինչեւ վերջինիս իր նախկին աշխատանքում վերականգնելու օրն ընկած ամբողջ ժամանակահատվածի համար, «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ից հօգուտ ՀՀ պետական բյուջե բռնագանձել 4000 դրամ, ինչպես նաեւ դատարանի վճռով հաշվարկվող գումարի երկու տոկոսը՝ որպես վճարման ենթակա պետական տուրքի գումարներ: Ազգային պարկի տնօրենի ԺՊ Արմեն Ղազարյանը, չսպասելով, որ անցնի մեկամսյա ժամկետը, եւ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնի, հրաման է տվել Ա. Հարությունյանին վերականգնել իր նախկին աշխատանքում: Ազգային պարկի իրավաբանը համարել է, որ դատարանի վճիռը բողոքարկելու իմաստ չկա, վերաքննիչ դատարանում հաղթելու շանս գոյություն չունի, իսկ յուրաքանչյուր օրվա համար ՊՈԱԿ-ը պետք է Ա. Հարությունյանին գումար վճարի:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՆԻՍՏ

ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունում կայացել է Մասնագիտական կրթության եւ ուսուցման զարգացման ազգային խորհրդի (ՄԿՈՒԶԱԽ) հերթական նիստը, որը վարել է ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը:

Նիստին ներկա են եղել ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը, նախնական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթության վարչության պետ Արմենուհի Պողոսյանը, քոլեջների, ուսումնարանների տնօրեններ, կարիերայի կենտրոնների ներկայացուցիչներ:

Նիստի օրակարգային հարցերից էին գործատուների պահանջարկի եւ ՄԿՈՒ հաստատությունների կողմից մատուցվող կրթական ծառայությունների առկա խնդիրները, կարիերայի կենտրոնների աշխատանքի արդյունավետությունը, կատարվող աշխատանքների որակի բարձրացմանն ուղղված միջոցառումները, Հայաստանի գործատուների հանրապետական միության (ՀԳՀՄ) առաջարկները, ԿԳՄՍ նախարարության ռազմավարական մոտեցումը ՄԿՈՒ խորհուրդների աշխատանքին եւ այլ հարցեր:

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը ողջունել է ներկաներին եւ կարեւորել ներկայացված օրակարգի քննարկումը՝ վստահություն հայտնելով, որ այն արդյունավետ կլինի բոլոր կողմերի համար:

Նախարարի խոսքով՝ շրջանառության մեջ է «Մասնագիտական կրթության եւ ուսուցման մասին» օրենքի նախագիծը, որն առաջիկայում կներկայացվի Ազգային ժողով, եւ կառաջարկվի կազմակերպել հանրային լսումներ՝ հրավիրելով ոլորտի ներկայացուցիչներին՝ քննարկելու ներդրված նոր մեխանիզմները:

Երեւանի զբոսաշրջության, սպասարկման եւ սննդի արդյունաբերության հայհունական, Թեթեւ արդյունաբերության պետական քոլեջի եւ Երեւանի թիվ 8 արհեստագործական պետական ուսումնարանի տնօրենները ներկայացրել են իրենց ուսումնական հաստատություններում առկա խնդիրները, որոնք վերաբերում են մասնագիտությունների համալրմանը, դրանց գրավչության բարձրացմանը, կիրառական գիտելիքի մատուցման համար նոր սարքավորումներ ունենալու անհրաժեշտությանը, ուսանողներին աշխատանքով ապահովելու, գործատուների հետ համագործակցելու ներկա պայմաններին:

Երեւանի թեթեւ արդյունաբերության պետական քոլեջի տնօրեն Արտակ Սարգսյանի հավաստմամբ՝ քոլեջը գործատուների հետ համագործակցության հաջողված փորձ ունի, սակայն ակնհայտ է արդիական սարքավորումների անհրաժեշտությունը, քանի որ այդ առումով ուսումնական պրակտիկան եւ գործատուների պահանջները չեն համապատասխանում:

Ուսումնական հաստատությունների ղեկավարների խոսքով՝ մասնագիտությունների վերաբերյալ իրազեկումն ապահովելու նպատակով նրանք աշխատում են դպրոցների հետ, իսկ ուսանողներին աշխատանքով ապահովելու նպատակով՝ անձամբ գործատուների հետ, որոնք անմիջապես ներկա են լինում նաեւ ամփոփիչ քննություններին: Ընդգծվել է, որ թեեւ որոշ մասնագիտություններ լայն պահանջարկ ունեն, սակայն աշխատաշուկա մուտք գործելու համար դիպլոմավորված մասնագետ լինելը նախապայման է հանդիսանում, ինչը ՄԿՈՒ ոլորտում լրացուցիչ խնդիր է առաջացնում:

Կարիերայի կենտրոնների ներկայացուցիչների խոսքով՝ մարզերում մասնագիտություններն ընտրվում են՝ ըստ տվյալ տարածաշրջանին բնորոշ տնտեսական առանձնահատկության, եւ այդ առումով ուսանողները հիմնականում աշխատանք գտնելու խնդիր չեն ունենում: Կողմերը հավաստել են ՄԿՈՒ ծրագրերը տվյալ մարզի զարգացման ծրագրին համահունչ դարձնելու անհրաժեշտությունն ու արդյունավետությունը բոլոր մարզերի համար:

Հանդիպման ընթացքում ՀԳՀՄ ներկայացուցիչները հանդես են եկել ՄԿՈՒ ոլորտի վերաբերյալ առաջարկներով: Մասնավորապես՝առաջարկվել է ոլորտի մասնագիտությունների ցանկը հաստատելիս կիրառել հավատարմագրման այլընտրանքային տարբերակ՝ այլ կառույցների ակտիվ մասնակցությամբ, կրթական չափորոշիչներում եւ մոդուլային ծրագրերում որպես բաղկացուցիչ ավելացնել ժամանակի կառավարում, վերլուծական մտածելակերպ, թիմային աշխատանք, խնդիրների լուծում եւ այլ հմտություններ, գործնական դասերն անցկացնել հենց գործատուների տարածքում եւ այլն:

ՀԳՀՄ-ի կողմից առաջարկվել է նաեւ ԿԳՄՍ նախարարության եւ «Արդյունաբերության անվտանգության ուսումնական ազգային կենտրոն» ՓԲԸ-ի հետ համատեղ իրականացնել վերապատրաստում ՄԿՈՒ ոլորտի սովորողների եւ աշխատակազմի անվտանգության ապահովման վերաբերյալ:

Հանդիպման ավարտին ձեռք է բերվել պայմանավորվածություն հաջորդիվ առանձին հանդիպումներ կազմակերպելու եւ ոլորտին առնչվող խնդիրները քննարկելու նպատակով:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՇԱՐՈՒՆԱԿՎԻ

«Ararat կոնյակի մատակարարումները Ռուսաստան իրականացվում են արտադրողի հետ գործող պայմանագրերով եւ կշարունակվեն նաեւ հետագայում, հարկ եղած դեպքում ելք կգտնվի»,- «ՌԻԱ Նովոստիին» տված հարցազրույցում ասել է երկրի խոշորագույն գինի ներկրող Luding Group-ի գործադիր տնօրեն Էռնեստ Խաչատուրյանը:

Մայիսի վերջին ընկերությունը հայտարարեց, որ Pernod Ricard-ից, որը նախկինում որոշել էր դադարեցնել իր արտադրանքի արտահանումը երկիր, ծանուցումներ չի ստացել Ararat կոնյակի ապրանքանիշի հետ համագործակցությունը դադարեցնելու մասին եւ շարունակում է այն մատակարարել ռուսական շուկա:

«Ոչինչ չի փոխվել, մատակարարումները շարունակվում են: Ռուսաստանը՝ առանց Ararat-ի, եւ Ararat-ն առանց Ռուսաստանի ես չեմ պատկերացնում: Գործող բոլորը պայմանագրերը կատարվում են, հետո կնայենք, ինչ-որ ելք կգտնենք: Կրկին ֆրանսիական արտադրողը երկար ժամանակ հարաբերություններ էր հաստատում ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Հայաստանի հետ»,- ասաց Խաչատուրյանը:

Մայիսի կեսերին Pernod Ricard-ը հայտարարեց, որ ապրիլի վերջին դադարեցրել է իր բոլոր միջազգային ապրանքանիշերի արտահանումը Ռուսաստան: Նշվել էր, որ ընկերությունը կդադարեցնի նաեւ իր արտադրանքի տարածումը երկրում: Ընկերության պորտֆելը ներառում է տասնյակ ապրանքանիշեր, այդ թվում՝ Chivas Regal վիսկի, Jameson, Ballantine's, Absolut օղի, Olmeca տեկիլա, Havana ռոմ եւ Ararat կոնյակ:

Մայիսի կեսերին նաեւ Հայաստանի էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանն ասել էր, որ Pernod Ricard-ին պատկանող Երեւանի կոնյակի գործարանը կարող է դադարեցնել իր արտադրանքի արտահանումը Ռուսաստան:

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ՃԱՆԱՊԱՐՀԸ

Հիմնանորոգվում է Գեղարքունիքի մարզի Լճաշեն բնակավայրում գտնվող՝ կիկլոպյան ամրոց տանող ճանապարհը՝ 1.2կմ երկարությամբ: «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամից հայտնում են, որ շինարարությունը ՀՀ պետական բյուջեից տրամադրված միջոցներով իրականացնում է «Ճանշին» ՍՊԸ-ն, տեխնիկական հսկողությունը՝ «Հալդի քոնսալթ» ՍՊԸ-ն:

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամից հայտնում են, որ այս պահին կապալառու կազմակերպությունը կատարում է ծածկի քանդում, ջրահեռացման համակարգի, մայթերի կառուցում, տեղադրվում են վաքեր: Ամբողջովին կվերականգնվի երթեւեկելի հատվածը, կնորոգվեն նաեւ ճանապարհի վրա գտնվող երկաթբետոնե կամուրջները, հիմնանորոգվող հատվածը կկահավորվի անվտանգության տարրերով:

Նշված ճանապարհի հիմնանորոգումը կարեւոր նշանակություն ունի տարածաշրջանի զբոսաշրջության զարգացման առումով: Լճաշենը Հայաստանի հնագույն բնակավայրերից է: Այստեղ բացվում են մեր անցյալի մասին պատմող նշանակալի հնագիտական շերտեր, ինչի վկայությունն է հենց կիկլոպյան ամրոցը, որը թվագրվում է Քրիստոսի ծննդից առաջ 3-րդ հազարամյակին:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 10 ճՏՊ. 14 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ԲՈՒՀԵՐՈՒՄ ՊՈՐՏՈՒԳԱԼԵՐԵ՞Ն ԿՍՈՎՈՐԵՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Բրազիլիայի Դաշնային Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Ֆաբիո Վազ Պիտալուգային:

Հանդիպմանը ներկա էր նաեւ ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը:

ԿԳՄՍՆ-ից հայտնում են, որ նախարարը ողջունել է դեսպանին եւ շնորհավորել նշանակման կապակցությամբ՝ մաղթելով արդյունավետ աշխատանք՝ ի շահ հայ-բրազիլական բարեկամական կապերի զարգացման:

Հանդիպման ընթացքում կողմերը դիտարկել են կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի ոլորտներում համագործակցության ընդլայնմանն առնչվող մի շարք հարցեր:

Անդրադառնալով վերոնշյալ ոլորտներում համագործակցության ընդլայնմանը՝ նախարարը տեղեկացրել է, որ երկու երկրների համապատասխան գերատեսչությունների միջեւ քննարկվում են բարձրագույն կրթության, սպորտի եւ ֆիզիկական դաստիարակության բնագավառներում համագործակցության մասին հուշագրերը:

Ժաննա Անդրեասյանը հույս է հայտնել, որ հայ-բրազիլական համագործակցության խորացման ու ամրապնդման ուղղությամբ աշխատանքներն ավելի արդյունավետ ընթացք կստանան:

Դեսպան Ֆաբիո Վազ Պիտալուգան շնորհակալություն է հայտնել նախարարին ընդունելության համար եւ ընդգծել, որ երկու երկրների միջեւ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի ոլորտներում առկա է սերտ համագործակցության մեծ ներուժ: Դեսպանը ներկայացրել է հնարավոր համագործակցությանն առնչվող ուղղություններն ու ծրագրերը՝ կրթական փոխանակումների, բուհերում բրազիլական պորտուգալերենի ուսուցման, հայ-բրազիլական մշակութային կապերի հզորացմանն ուղղված միջոցառումների իրականացման համատեքստում:

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը հանդիպման ընթացքում դեսպանի ուշադրությունն է հրավիրել նաեւ Լեռնային Ղարաբաղում 44-օրյա պատերազմի հետեւանքով Ադրբեջանի վերահսկողության ներքո անցած տարածքներում հայկական պատմամշակութային ժառանգության պահպանության խնդրին:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կորել է Ռաֆայել Արմենի Ղազարյանի N AB 211349 դիպլոմը՝ տրված Երեւանի գեղարվեստի պետական ակադեմիայի կողմից 30 հունիսի 2016 թվականին:

Գրանցման համար՝ 1333, որով Ռաֆայել Ղազարյանին շնորհվել է Համակարգչային գրաֆիկայի բակալավրի աստիճան: Համարել անվավեր:

ԱՇԽԱՏԱՐԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՒՄ Է

ՀՀ կենտրոնական բանկում, «ԱրՔա»-ի հետ համատեղ, Mastercard Academy-ի կողմից ֆինանսական կառույցների վճարահաշվարկային ոլորտի մասնագետների համար անցկացվել է երկօրյա աշխատարան, որի հիմնական թեման վճարային քարտերի ոլորտում կիբերանվտանգության եւ խարդախությունների դեմ պայքարն էր: Հանդիպման նպատակն էր Հայաստանի վճարային շուկայի մասնակիցներին ծանոթացնել անվտանգության վերջին պահանջներին եւ քարտային գործառնությունների անընդհատ զարգացող միտումներին: Աշխատարանը վարում էր Mastercard-ի ներկայացուցիչ Եվգենի Բալեզինը, որը կարեւոր հարցեր է բարձրացրել տարածաշրջանում տարածված ռիսկերի մասին:

Mastercard-ը մասնակիցների հետ քննարկել է քարտերի խարդախության միտումները երկրի, տարածաշրջանային եւ համաշխարհային մակարդակներում, ինչպես նաեւ ամենատարածված եւ ակտուալ սխեմաներ (scam) եւ «սոցիալական ճարտարագիտության» օրինակներ, քարտով տարբեր տեսակի գործառնությունների ռիսկեր՝ ներառյալ էլեկտրոնային դրամապանակի գործառնություններ, դրամական փոխանցումներ, կիբերհարձակման օրինակներ, գումարի վերադարձման գործառնություններ: Ներկայացվել են նաեւ ծառայություններ մատուցողների եւ առեւտրային հարթակների հետ աշխատելու հիմնական մոտեցումներն ու պահանջները, նկարագրվել են հիմնական համապատասխանության ծրագրերի շահագործման սկզբունքները:

Ներկայացվել են նաեւ Mastercard-ի հակախարդախության եւ ռիսկերի կանխարգելման լուծումները, որին հետեւել է քննարկում:

2 օր հատկացվել է բողոքարկված գործարքների գործընթացի ամբողջական ցիկլի մանրամասն նկարագրությանը, ավտորիզացիայի հիմունքներին եւ խարդախության կանխարգելման տեխնոլոգիաներին. քննարկվել են տարբեր տեսակի վիճարկվող գործարքներ:

Աշխատարանի ընթացքում Mastercard-ի ներկայացուցիչ Եվգենի Բալեզինը ընդգծել է համատեղ համագործակցության եւ վճարային էկոհամակարգում ռիսկերի նվազեցման կարեւորությունը: «Mastercard-ի առաքելությունն է նպաստել վճարումների ապահով եւ վստահելի միջավայրին: Այս նպատակին հասնելու գործում կարեւոր դեր է խաղում Հայաստանի կենտրոնական բանկի եւ տեղական շահագրգիռ կողմերի հետ մեր համագործակցությունը»:

ՀՀ կենտրոնական բանկը նույնպես իր երախտագիտությունն է հայտնել Mastercard-ին եւ ընդգծել նման նախաձեռնությունների կարեւորությունը Հայաստանի վճարային շուկայի համար:

Աշխատարանի ընթացքում մասնակիցների հետ իրենց փորձով են կիսվել նաեւ Նինո Տուլաշվիլին, Կունտայ Սիմբատովան եւ Ելենա Խասանովան: Միջոցառումը կարեւոր դեր է խաղացել մասնագետների ամուր ցանցի ստեղծման գործում՝ նվիրված վճարումների անվտանգությանը եւ սպառողների պաշտպանությանը:

Որպես ոլորտի առաջատար՝ Mastercard-ը հավատարիմ է մնում նորարարություններին, անվտանգության ստանդարտների առաջխաղացմանը եւ վճարային էկոհամակարգի ամրապնդմանը: Ընկերության շարունակական համագործակցությունը կարգավորող մարմինների, ֆինանսական հաստատությունների եւ ոլորտի շահագրգիռ կողմերի հետ ցույց է տալիս իր հանձնառությունը հաճախորդներին ապահով եւ անխափան վճարման փորձ ապահովելու հարցում:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ԴՊՐՈՑԸ ԴԵՄ Է ՕՊՏԻՄԱԼԱՑՄԱՆԸ

«ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանի հետ հանդիպումն անցավ դրական մթնոլորտում. որոշվեց, որ նախագիծը կլրամշակվի, սակայն դա մեզ համար բավարար չէ, քանի որ մենք դեմ ենք դպրոցի փակմանը»,- ասաց Արմավիրի թիվ 4 ավագ դպրոցի տնօրեն Անի Քլաշյանը:

Հիշեցնենք, որ նախարարությունը նախատեսում է Արմավիրի թիվ 4 ավագ դպրոցը միավորել նույն քաղաքի թիվ 1 ավագ դպրոցի հետ: Նախագծի հիմնավորման մեջ միավորման անհրաժեշտությունը բացատրվում է երկու հաստատությունում էլ սովորողների թվի նվազմամբ եւ շենքերի օպտիմալ օգտագործմամբ: Նշվում է, որ նախորդ ուսումնական տարում Արմավիրի թիվ 1 դպրոցն ունեցել է մոտ 290 աշակերտ: Շենքը նախատեսված է 1000-ի համար: Թիվ 4 դպրոցում եղել է մոտ 250 աշակերտ: Շենքի նախագծային հզորությունը 680 է:

«Ինչպես հասկանում ենք, շատ պաշտոնյաներ են շահագրգռված, որ այս դպրոցը փակվի, որովհետեւ շենքը շատ բանուկ հատվածում է, կենտրոնում է եւ կարող է ցանկացած կենտրոնի համար օգտակար լինել: Մենք սա դեռեւս խոսակցությունների մակարդակով ենք լսում, բայց չենք ուզում հավատալ»,- նշեց նա:

Տնօրենի խոսքով՝ իրենց շենքն օգտագործելու է Արմավիրի բժշկական քոլեջը, սակայն, նախկին նախագծի համաձայն, այլ քոլեջներ եւս պետք է միացվեն, սակայն շենքի հզորությունը դա թույլ չի տա:

«Նախագիծը մեզ հետ չէր էլ քննարկվել, մենք հանրայնացվելուց հետո ենք իմացել: Մենք նախարարին ասել ենք մեր հակափաստարկները, ասել է՝ կվերանայվի: Բայց մենք բոլոր դեպքերում դեմ ենք, որովհետեւ արդար չէ, որ մեր բողոքները հաշվի չեն առնվում. մարդկանց հետ չի կարելի այսպես վարվել: Մեր անձնակազմը 40 հոգուց ավելի է, եւ վստահաբար օպտիմալացման դեպքում ոչ բոլորն են աշխատանք ստանալու»,- ասաց Անի Քլաշյանը:

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԿԱԶՄԸ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը որոշում է ստորագրել ««Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կազմը հաստատելու մասին:

«Ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի եւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 20-ի N 927-Ն որոշման N 1 հավելվածի 28-րդ կետի պահանջներով՝

1. Հաստատել ««Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վարչապետի 2017 թվականի դեկտեմբերի 26-ի ««««Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կազմը հաստատելու մասին» N 1531-Ա որոշումը»,- նշված է որոշման մեջ:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ է նշանակվել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՔԱՐԴԱՇՅԱՆԸ՝ ԱՄՍԱԳՐԻ ՇԱՊԻԿԻՆ

Քիմ Քարդաշյանը լուսանկարվել է TIME ամսագրի շապիկի համար, որը նվիրված է «Ամենաազդեցիկ ընկերություններին»:



«Սկզբում ես իսկապես չէի հասկանում, թե ուր է ընթանում իմ կարիերան, քանզի մի տեսակ առաջ էի գնում՝ լիցենզավորման գործարքներ կնքելով բազմաթիվ տարբեր ընկերությունների հետ, որոնք հակասում էին իրենք իրենց...», - TIME-ին տված հարցազրույցում ասել է Քիմը:

Skims-ը, որն առաջին անգամ առաջարկեց ներքնազգեստ եւ ձգվող հանդերձանք, այնուհետեւ ընդլայնվեց մինչեւ տնային հագուստ, լողազգեստներ, շապիկներ եւ զգեստներ, փոխել է դա, եւ բիզնեսի աշխարհը տեսնում է այս ամենը: Խոսելով իր ամենահաջող ձեռնարկության մասին՝ Քարդաշյանը կարծես թե թեթեւացել է. «Ես ինձ լավ եմ զգում: Ես արեցի դա»:

Skims-ը, որը հիմնադրվել է 2019թ.-ի վերջին, հայտարարել է, որ այն անցյալ տարի կազմել է 500 միլիոն դոլար՝ նախատեսվածից 25%-ով ավելի եւ 80%-ով ավելի, քան 2021թ.-ին: Առայժմ 2023թ.-ը դանդաղ տարի էր ներքնազգեստի վաճառքի համար, բայց լավատեսական տարի էր Skims-ի համար: Գործադիր տնօրեն Ջենս Գրեդը, որն իր կնոջ՝ Էմմայի եւ Քարդաշյանի հետ հիմնադրել է ընկերությունը, ասում է, որ ներքնազգեստի վաճառքն ապրիլին տարեկան կտրվածքով աճել է 86%-ով:

Ընկերության ազդեցության նուրբ նշաններ կան, ինչպես, օրինակ, #Skimsdupes անվանումը ստացած կրկնօրինակների աճը սոցիալական մեդիայում: Կան նաեւ ավելի քիչ նուրբ նշաններ. ընկերությունը փորձարկում է նոր ապրանքանիշի ընդլայնումներ, ինչպիսիք են հարսնացուի հագուստը, եւ, ինչպես Քարդաշյանն է TIME-ին ասել, տղամարդկանց տնային հագուստի եւ ներքնազգեստի շարքը կթողարկվի այս աշնանը:

«Դա միանշանակ գերազանցում էր այն ամենը, ինչ ես երբեւէ պատկերացրել եմ», - ասել է Քարդաշյանը:- Ես դեռ ունեմ ինքնակոչի համախտանիշ կամ նման բան, բայց ես կարծում եմ, որ դա այն բանի մի մասն է, որն ինձ ստիպում է առաջ գնալ»:

Քարդաշյանը սեփական գումարները ներդրել է Skims-ում եւ հանդիսանում է ամենամեծ բաժնետերը: Նա սովորաբար հանդես է գալիս նաեւ որպես մոդել: Նա կարծում է, որ փորձել է ավելի քան 7000 իր: «Ես միշտ սիրում եմ դա տեսնել ինձ վրա», - նշել է նա: Բացի այդ, նա Skims-ի ստեղծագործական տնօրենն է, ընտրում է գործվածքներ, կտրվածքներ եւ կոնցեպտներ արշավի համար, լուսանկարիչներ եւ մոդելներ:

Ռեալիթի հեռուստաաստղը եւ՛ գովեստի, եւ՛ քննադատության է արժանացել այն բանի համար, թե ինչպես է նա օգտագործել կազմվածքն իր ապրանքանիշը ստեղծելու համար: Կան մարդիկ, որոնք կարծում են, որ «տանձաձեւ» կազմվածքի նրա հանրահռչակումը ազատագրում էր, մինչդեռ մյուսները կարծում են, որ նա ավելի շատ պարտական է սեւամորթներին ու իսպանացիներին: Բայց շատերը համաձայն են, որ նա ունեցվածքն անհարկի չի վատնում:

«Նորաձեւության մեջ փոփոխությունների հիմնական շարժիչ ուժն այն է, թե ինչպես ենք մենք ցանկանում, որ մեր մարմինը երեւա, եւ ինչպիսի ուրվագիծ ու մարմնի ձեւավորում ենք մենք ներկայումս գեղեցիկ համարում», - ասում է Լարիսա Քինգը՝ ներքնազգեստի դիզայները եւ Նյու Յորքի նորաձեւության տեխնոլոգիական ինստիտուտի ասիստենտը: «Քանի որ Քիմ Քարդաշյանն ավելի ու ավելի հայտնի դարձավ, մարդիկ ցանկանում էին իսկապես փարթամ հետույք ունենալ: Այսպիսով, մեր տաբատները բարձր դարձան, եւ ուշադրությունը կենտրոնացավ գոտկատեղի, կոնքերի եւ հետույքի վրա»: Քանի որ տաբատը բարձրանում է, ներքնազգեստը փոխվում է, որպեսզի համապատասխանի:

ՍԱՐՇԱԳԱՆՔ

ՄԱՀԱՑԵԼ Է ՋՈՒՍԻ ՄԱՅՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ հունիսի 17-ի առավոտյան կյանքից հեռացել է երգչուհի Ջուսի մայրը, որը երկար տարիներ պայքարում էր քաղցկեղի դեմ:

Նշենք, որ երգչուհին «Ինստագրամ»-ի «Սթորի» բաժնում հրապարակել է մայրիկի երիտասարդ տարիների լուսանկարները:

Հիշեցնենք, որ Ջուսի մայրիկին ֆինանսական օգնություն տրամադրելու համար կորոնավիրուս համավարակի ժամանակ երգչուհու ընկերները կազմակերպել էին դրամահավաք:

ՈՒ՞Ր Է ԼԵՅԼԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

Տեւական ժամանակ է՝ ՀՀ վաստակավոր արտիստուհի, երգչուհի Լեյլա Սարիբեկյանին հանրությունը էկրաններին չի տեսնում:

Հետաքրքիր է՝ որտեղ է նա այժմ եւ ինչով է զբաղված:

Լեյլա Սարիբեկյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում նշեց, որ էկրաններին չերեւալը դեռ չի նշանակում, թե իր ստեղծագործական կյանքում պասիվ շրջան է: Երգչուհին մեզ հետ զրույցում շեշտեց, որ աշխատում է նոր երգերի վրա եւ վերջին շրջանում իր երկրպագուների դատին է հանձնել նոր երգեր, իսկ ավելի վաղ էլ ներկայացրել է տեսահոլովակ:

Երգչուհին ընդգծում է, որ հանրությունն իր աշխատանքները չի տեսնում, քանի որ հատուկ դրանք չի պրոպագանդում, սակայն դա չի խանգարում, որպեսզի նա շարունակի ստեղծագործել:

Նշենք, որ Լեյլա Սարիբեկյանի ամենահայտնի երգերից է «Միասնության շուրջպար», «Տեսիլք», «Հրաժեշտ», «Հայորդիներ» եւ այլն:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՖՈՒՏԲՈԼ

ՀԵՌԱՆՈՒՄ Է «ԱԼԱՇԿԵՐՏ»-ԻՑ

«Ալաշկերտը» եւ թիմի կիսապաշտպան Արտակ Գրիգորյանը չեն երկարաձգել պայմանագրի ժամկետը. հաղորդում է երեւանյան ակումբի մամուլի ծառայությունը:

35-ամյա ֆուտբոլիստը 2015-ից էր խաղում «Ալաշկերտում», որի հետ նվաճել է մի շարք տիտղոսներ, երկար տարիներ եղել է թիմի ավագը:

«Շնորհակալ եմ իմ հարազատ ակումբին տպավորիչ ժամանակաշրջանի համար: Միասին մեծ հաջողությունների ենք հասել:

Հաջողություն եմ մաղթում «Ալաշկերտին» նոր մրցաշրջանում: Այս թիմը յուրահատուկ տեղ է զբաղեցնում իմ սրտում»,- նշել է Արտակ Գրիգորյանը:

«Ալաշկերտը» շնորհակալություն է հայտնում Արտակ Գրիգորյանին նվիրվածության եւ հսկայական աշխատանքի համար ու հաջողություն է մաղթում փորձառու ֆուտբոլիստին հետագա կարիերայում:

ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԸ ՀԵՌԱՆՈՒՄ ԵՆ ԹԻՄԻՑ

2022/23 մրցաշրջանի ավարտից հետո «Արարատի» կազմում իրենց ելույթներն ավարտում են դարպասապահներ Սերգեյ Ռեյակինն ու Գոռ Մանուկյանը, պաշտպաններ Հայկ Իշխանյանը, Հովհաննես Նազարյանը, Վարդան Արզոյանը, Դուշան Միհիչը, Թեդի Մեզագը, կիսապաշտպաններ Արմանդ Դագրուն եւ Ջիլե Տիհիդեն, հարձակվող Ամարա Տրաորեն:

Սերգեյ Ռեյակինը 2019/20 եւ 2022/23 մրցաշրջաններում է հանդես եկել «Արարատում»՝ ընդհանուր առմամբ անցկացնելով 33 հանդիպում:

Գոռ Մանուկյանը «Արարատի» կազմում մասնակցել է Fastex Հայաստանի պրեմիեր լիգայի վեց հանդիպման:

Հայկ Իշխանյանը նախորդ մրցաշրջանի մեկնարկում էր միացել «Արարատին» եւ թիմի կազմում մասնակցել է Պրեմիեր լիգայի 26 հանդիպման:

Դուշան Միհիչը «Արարատի» կազմում անցկացրել է 15 խաղ եւ դարձել է 2 գոլի հեղինակ:

33-ամյա Թեդի Մեզագը թիմի կազմում մասնակցել է 9 խաղի եւ դարձել է 1 գոլի հեղինակ:

Հովհաննես Նազարյանը երկու մրցաշրջան է անցկացրել «Արարատի» կազմում՝ ընդհանուր առմամբ մասնակցելով 26 խաղի եւ դառնալով մեկ գոլի հեղինակ:

Վարդան Արզոյանն ավարտված առաջնությունում 9 անգամ խաղադաշտ է դուրս եկել «Արարատի» մարզաշապիկով, իսկ ընդհանուր առմամբ նա «Արարատի» կազմում մասնակցել է Պրեմիեր լիգայի 80 խաղի եւ դարձել է մեկ գոլի հեղինակ:

Արմանդ Դագրուն երկու մրցաշրջանում «Արարատի» կազմում անցկացրել է 27 խաղ եւ դարձել է 1 գոլի հեղինակ:

Ջիլե Տիհիդեն «Արարատի» կազմում 11 խաղ է անցկացրել, իսկ Ամարա Տրաորեն մասնակցել է 27 խաղի եւ դարձել է 3 գոլի հեղինակ:

● Հունիսի 23-ին Երեւանի Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Փարիզյան դատավճիռ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՍՅՈՒՆԷ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ

ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ու՞մ կարող են նվիրվել բնակելի տարածքները ՀՀ-ում:

Սերգեյ Մելիքյան (33 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Պետական մարմիններին ամրացված բնակելի տարածքները կարող են նվիրվել համապատասխան տարածքում հաշվառված եւ մինչեւ 2017 թվականի դեկտեմբերի 1-ը փաստացի բնակվող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիներին (բացառությամբ սահմանամերձ համայնքներում բնակվողների, որոնց համար փաստացի բնակվելու ժամկետի սահմանափակում չի նախատեսվում), որոնք պետական աջակցությամբ իրականացված բնակապահովման ծրագրերի շրջանակներում երբեւէ բնակարան (բնակելի տուն) ձեռք չեն բերել կամ բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու համար ֆինանսական աջակցություն չեն ստացել:

Պետական գույքի կառավարման կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Պետական մարմիններին ամրացված բնակելի տարածքները կարող են նվիրվել նաեւ նրանց, ովքեր սեփականության իրավունքով չունեն անշարժ գույք (բացառությամբ բնակելի տարածքների նկատմամբ ընդհանուր կամ բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող բաժնեմասի, չկառուցապատված հողամասերի, բնակելի նշանակության օժանդակ շինությունների, ինչպես նաեւ ոչ բնակելի նշանակություն ունեցող շենքերի, շինությունների):

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ո՞րն է քաղաքացիական ծառայող դառնալու համար անհրաժեշտ կրթության չափանիշը:

Լիաննա Պետրոսյան (22 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնելու համար ՀՀ քաղաքացին պետք է ունենա բարձրագույն կրթություն, իսկ պաշտոնի անձնագրով բարձրագույն մասնագիտական կրթություն նախատեսված լինելու դեպքում՝ համապատասխան մասնագիտական կրթություն՝ բացառությամբ քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների 6-րդ, 7-րդ եւ 8-րդ ենթախմբերի պաշտոնների համար, որոնց համար առնվազն միջնակարգ կրթություն է պահանջվում:

ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Առանձին դեպքերում մասնագիտական պաշտոնների 6-րդ, 7-րդ եւ 8-րդ ենթախմբերի պաշտոնների համար պաշտոնի անձնագրով կարող է սահմանվել բարձրագույն (մասնագիտական) կրթություն ունենալու պահանջ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Երեւանի կենտրոնում շարունակում են «վխտալ» աղբակույտերը: Աբովյան փողոցի բանուկ հատվածներից մեկում հերթական անգամ կուտակվել են աղբի թափոններ, որոնք անուշադրության են մատնվում քաղաքապետարանի կողմից:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Տարածք	Գիշեր	Ցերեկ
Շիրակ	+8 +12	+16 +20
Կոտայքի լեռներ	+8 +11	+15 +18
Կոտայքի նախալեռներ	+13 +15	+23 +26
Գեղարքունիք	+5 +10	+15 +18
Լոռի	+9 +11	+14 +17
Տավուշ	+10 +14	+15 +19
Արագածոտնի լեռներ	+6 +9	+16 +18
Արագածոտնի նախալեռներ	+15 +18	+23 +26

Տարածք	Գիշեր	Ցերեկ
Արարատ	+15 +18	+26 +38
Արմավիր	+14 +16	+26 +28
Վայոց ձորի լեռներ	+6 +9	+15 +18
Վայոց ձորի նախալեռներ	+15 +19	+26 +28
Սյունիքի հովիտներ	+15 +19	+25 +29
Սյունիքի նախալեռներ	+11 +13	+16 +20
Արցախ	+14 +18	+26 +29
Երեւան	+14 +16	+25 +27

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **21.6.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում

Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*